ՆԱԴԵԺԴԱ ԱՖՅԱՆ
ՀՊՏՀ բնօգտագործման տնտեսագիտության ամբիոնի ասիստենտ, տնտեսագիտության թեկնածու

ԳԱՐՐԻ ԳԱՍՊԱՐՅԱՆ
ՀՊՏՀ բնօգտագործման տնտեսագիտության մասնագիտացման մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանող

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԵԽԱՆԻԶՄԻ ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄԸ

Հոդվածում ուսումնասիրվել է շրջակա միջավայրի պահպանության տնտեսական մեխանիզմի գործիքակազմը և դիտարկվել են վերջինիս հիմնական տեսակների կիրարկման միջազգային փորձի առանձնահատկությունները: Ուսումնասիրության արդյունքում ներկայացվել են շրջակա միջավայրի պահպանության տնտեսական մեխանիզմի գործիքակազմի հիմնական տեսակները՝ ըստ շրջակա միջավայրի պահպանության էկոլոգիական և տնտեսական համադրելի դրույթների: Կատարվել է եզրահանգում, որ շրջակա միջավայրի պահպանության տնտեսական մեխանիզմի գործիքակազմի արդյունավետ համախմբման և նպատակային կիրարկման դեպքում կարելի է հասնել էկոլոգիական և տնտեսական համադրելի դրական արդյունքների:

Հիմնաբառեր. *էկոլոգիական հարկեր, աղտոտման թույլտվությունների (իրավունքի) առքուվաճառքի համակարգ, գրավ-վերադարձ համակարգ, տուգանքներ*
JEL: Q50, Q58

Ներածություն: Տնտեսական գործունեության ընթացքում գրեթե անհնար է խուսափել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունից,

ինչպես նաև դրանց բացասական հետևանքներից, որոնց փոխհատուցման համար մշակված են և կիրարկվում են բազմաթիվ մեխանիզմներ՝ համապատասխան գործիքակազմերով: Ընդհանուր առմամբ, կարելի է տարանջատել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունը կարգավորող երկու խոշոր մեխանիզմներ՝ պետական և տնտեսական: Շուկայական տնտեսության պայմաններում այդ մեխանիզմներից առավել լայն կիրառություն է ստացել տնտեսականը: Այն շրջակա միջավայրի պահպանության, բնական ռեսուրսների ռացիոնալ օգտագործման և վերարտադրության ոլորտում կարգավորման տնտեսական գործիքների համակարգ է՝ ուղղված սոցիալական, տնտեսական և էկոլոգիական բնույթի շահերի համադրելի կառավարմանը: Այսինքն, տնտեսական մեխանիզմի կիրառումը նպատակաուղղված է տնտեսական գործունեության և շրջակա միջավայրի միջև փոխներգործության հավասարակշռման և կայունացման ապահովմանը: Մեր հանրապետությունում շրջակա միջավայրի պահպանության և կարգավորման տնտեսական մեխանիզմների գործիքակազմի տեսակների և կիրարկման միջազգային փորձի առանձնահատկությունների վերաբերյալ կատարված գիտական ուսումնասիրությունները սակավաթիվ են: Ելնելով վերոնշյալից՝ գիտական հոդվածի ուսումնասիրման նպատակն է ներկայացնել տնտեսական մեխանիզմի միջազգային փորձառության ընթացքում առավել լայն կիրառություն ունեցող գործիքակազմը, որն էլ հիմնավորում է թեմայի արդիականությունը: Նպատակից բխող խնդիրներն են. ուսումնասիրել և վեր հանել շրջակա միջավայրի պահպանության տնտեսական մեխանիզմի գործիքակազմի հիմնական տեսակները, ինչպես նաև դիտարկել հիմնական տեսակների կիրարկման միջազգային փորձի առանձնահատկությունները՝ ըստ շրջակա միջավայրի պահպանության էկոլոգիական և տնտեսական համադրելի դրույթների:

Գրականության ակնարկ: Շրջակա միջավայրի պահպանության տնտեսական մեխանիզմը սկսել է ձևավորվել դեռևս 20-րդ դարի 60-70-ական թվականներին և մինչ օրս գտնվում է ձևավորման փուլում: Ընդհանուր առմամբ, շրջակա միջավայրի պահպանության տնտեսական մեխանիզմը կարելի է սահմանել որպես խրախուսական և հարկադրական բնույթի տնտեսական գործիքների համակարգ, որոնց օգտագործումը շրջակա միջավայրի պահպանության կառավարման ոլորտում ապահովում է էկոլոգիապես և տնտեսապես համադրելի տնտեսական օգուտներ: Այս եզրահանգումներին եկել ենք Օ.Ս. Շիմովայի, Ն.Կ. Սոկոլովսկու «Բնօգտագործման տնտեսագիտություն»[1], Կ.Վ. Պապենովի «Բնօգտագործման տնտեսագիտություն»[2], Ս.Վ. Մակարի «Բնօգտագործման տնտեսագիտություն»[3], Ա.Պ. Մոսկալենկոյի, Վ.Բ. Գուտենևի, Ս.Ա. Մոսկալենկոյի, Վ.Վ. Դենիսովի «Բնօգտագործման և ռեսուրսախնայողության տնտեսագիտություն» դասագրքերում[4], Ա.Վ. Անիսի-

---

[1] Տե՛ս **Шимова О.С., Соколовский Н.К.,** Экономика природопользования, учеб. пособие, 2-е изд., М., "ИНФРА-М", 2011:

[2] Տե՛ս **Папенова К.В.,** Экономика природопользования, учебник, М., "ТЕИС", ТК Велби, 2010:

[3] Տե՛ս **Макар С. В.,** Экономика природопользования, конспект лекций, 2-е изд., М., Издательство Юрайт, 2011:

[4] Տե՛ս **Москаленко А.П., Гутенев В.В., Москаленко С.А., Денисов В.В,** Экономика природопользования и ресурсосбережения, учебное пособие, под ред. Москаленко А.П., Ростов-на-Дону, "Феникс", 2014, 478[1]:

մովի «Կիրառական էկոլոգիա և բնօգտագործման տնտեսագիտություն» ուսումնական ձեռնարկում շրջակա միջավայրի պահպանության տնտեսական մեխանիզմի վերաբերյալ տեսական գիտելիքների ու տվյալների ուսումնասիրության արդյունքում[5]: Այս աշխատություններում ներկայացվել են շրջակա միջավայրի պահպանության տնտեսական մեխանիզմի բովանդակությունը, վերլուծվել է դրա գործիքակազմը, սակայն առանձնակի ուշադրություն չի դարձվել գործիքներից յուրաքանչյուրի կիրառման միջազգային փորձին:

Ինչ վերաբերում է շրջակա միջավայրի պահպանության տնտեսական մեխանիզմի վերաբերյալ ՀՀ-ում կատարված վերլուծություններին, ապա կարելի ասել, որ դրանք սակավաթիվ են: Շրջակա միջավայրի պահպանության տնտեսական մեխանիզմի գործիքակազմի միջազգային արդյունավետ փորձի վերաբերյալ թեմատիկ և կանոնակարգված ուսումնասիրությունները բացակայում են, սակայն այս թեմային շատ հակիրճ անդրադարձ է կատարվել այլ թեմաների ուսումնասիրությունների շրջանակներում: Օրինակ, «Բնապահպանության ոլորտի նորարարական ֆինանսատնտեսական մեխանիզմների ստեղծման» հայեցակարգում առավելապես անդրադարձ է կատարվել էկոհամակարգային ծառայություններին, իսկ շրջակա միջավայրի պահպանության տնտեսական մեխանիզմի գործիքներից ներկայացված է միայն ***գրավ-վերադարձ*** համակարգը: Շրջակա միջավայրի պահպանության տնտեսական մեխանիզմին անդրադարձ է կատարվել նաև Ս.Ա. Գևորգյանի, Ռ.Ա. Պետրոսյանի, Ա.Պ. Գևորգյանի «Բնապահպանական և բնօգտագործման վճարների որոշման մեթոդաբանության կատարելագործման հիմնախնդիրները ՀՀ-ում» գիտական հետազոտությունում, սակայն տնտեսական մեխանիզմի գործիքակազմի վերաբերյալ համալիր և բովանդակային վերլուծություն չի իրականացվել[6]: Ուստի, ելնելով այս ամենից, աշխատանքում ներկայացնում ենք շրջակա միջավայրի պահպանության տնտեսական մեխանիզմի հիմնական գործիքների բովանդակությունն ու կիրառության միջազգային փորձը:

Հետազոտության մեթոդաբանություն: Աշխատանքում առաջադրված նպատակների և խնդիրների վերլուծության, ինչպես նաև ուսումնասիրության հիմնական արդյունքների վերաբերյալ եզրահանգումներում օգտագործվել են տեսական հոդվածների համար նախատեսված երկրորդային տվյալների համեմատական և համադրելի, տրամաբանական մտահանգման համար՝ դեդուկցիոն և ինդուկցիոն մեթոդական մոտեցումներ:

Ուսումնասիրության ընթացքում տեղեկատվության և տվյալների հավաքագրման համար կիրառվել են համակարգային, համեմատական վերլուծությունների, դիտումների և տրամաբանական պատկերացման քննարկումների մեթոդական մոտեցումներ, ինչպես նաև շրջակա միջավայրի պահպանության քաղաքականության իրականացմանը վերաբերող տեղեկատվության հավաքագրման համար համադրելի ցուցանիշների էմպիրիկ մեթոդներ:

---

[5] Տե՛ս **Анисимов А. В.,** Прикладная экология и экономика природопользования, учебное пособие, Ростов-на-Дону: “Феникс”, 2007:

[6] Տե՛ս **Ս.Ա. Գևորգյան, Ռ.Ա. Պետրոսյան, Ա.Պ. Գևորգյան,** Բնապահպանական և բնօգտագործման վճարների որոշման մեթոդաբանության կատարելագործման հիմնախնդիրները ՀՀ-ում, Եր., «Տնտեսագետ», 2014:

Ուսումնասիրությունների ընթացքում կիրառված մեթոդաբանության համար տեղեկատվական հիմք են հանդիսացել ՀՀ շրջակա միջավայրի նախարարության ազգային զեկույցները, տարեկան հաշվետվությունները և տվյալների բազաները, Հայաստանի Հանրապետության բնապահպանական քաղաքականությանը վերաբերող իրավական նորմերը, հայեցակարգերը, ինչպես նաև շրջակա միջավայրի տնտեսագիտության, կայուն զարգացման քաղաքականության տեսական հիմնադրույթները, հայերեն և օտարալեզու ուսումնական և գիտահետազոտական մասնագիտական գրականությունը, շրջակա միջավայրի պահպանության տնտեսական մեխանիզմի կիրառման քաղաքականության միջազգային փորձի վերաբերյալ գիտական հոդվածները, միջազգային կազմակերպությունների, այդ թվում՝ Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության հրապարակած տվյալներն ու զեկույցները, ԱՄՆ-ի և եվրոպական մի շարք երկրների շրջակա միջավայրի պահպանությունը կարգավորող օրենսդրահիրավական ակտերը, միջազգային տարբեր պարբերականների գիտական ուսումնասիրությունների արդյունքները, փորձագիտական գնահատումները և ժամանակակից այլ գիտամեթոդական նյութեր:

Վերլուծություն: Զարգացած երկրներում ներկայում կիրառվում է շրջակա միջավայրի պահպանության տնտեսական մեխանիզմի ավելի քան 2800 գործիք, որոնց մեծամասնությունը վերաբերում է զանազան հարկերին և վճարներին, իսկ մնացածը՝ այլ տնտեսական գործիքներին[7]: Ընդհանրացնելով՝ կարելի է առանձնացնել շրջակա միջավայրի պահպանության տնտեսական մեխանիզմի հետևյալ հիմնական գործիքները.

1. էկոլոգիական հարկեր,
2. աղտոտման և թափոնների տեղադրման համար վճարներ,
3. սուբսիդիաներ (լրավճարներ) և արտոնյալ պայմաններով վարկեր,
4. հիմնական միջոցների արագացված ամորտիզացիոն հատկացումներ,
5. աղտոտման թույլտվությունների (իրավունքի) առքուվաճառքի համակարգ,
6. գրավ-վերադարձ համակարգ,
7. տուգանքներ:

Էկոլոգիական կամ «կանաչ» հարկերը ամենահաճախ կիրառվող և ամենաարդյունավետ գործիքներից են: Այդ հարկերի անհրաժեշտությունը առաջին անգամ հաստատվեց ԵՄ բնապահպանական գործողությունների ծրագրի շրջանակներում 1973 թ., որտեղ և հիմնավորվեց «Աղտոտողը վճարում է» սկզբունքը:

Էկոլոգիական հարկերը միտված են խթանելու բնական ռեսուրսների արդյունավետ օգտագործումը և շրջակա միջավայրի պահպանությունը: Էկոլոգիական կամ այլ կերպ ասած «կանաչ հարկերը» կոչված են լուծելու առնվազն երկու խնդիր.

1. արտադրանքի ինքնարժեքը առավել համարժեք դարձնել իրական ծախսերին, մասնավորապես՝ բնական ռեսուրսների իրական արժե-

[7] Տե՛ս Policy Instruments for the Environment brochure on the database 2017, http://www.oecd.org/environment/tools-evaluation/PINE_database_brochure.pdf:

քին և այն վնասին, որը հասցվում է շրջակա միջավայրին,

2. նպաստել էկոլոգիական վնասի փոխհատուցմանը տնտեսավարող սուբյեկտի կողմից, այլ ոչ թե՝ հասարակության (այսինքն՝ նպաստել «Աղտոտողը վճարում է» սկզբունքի իրականացմանը)[8]:

Այսպիսով, հարկերի բարձր դրույքաչափերի սահմանումը նպաստում է, որ բնատար և շրջակա միջավայրը աղտոտող գործունեության ընթացքում բնական ռեսուրսները ռացիոնալ օգտագործվեն, անթափոն կամ սակավաթափոն տեխնոլոգիաներ կիրառվեն՝ երբեմն ընդհուպ կանխելով առավել վտանգավոր տնտեսական գործունեության իրականացումը:

Ուսումնասիրելով միջազգային փորձը՝ պարզ է դառնում, որ աշխարհի մի շարք երկրներում կիրառվում են էկոլոգիական հարկերի տարբեր տեսակներ:

Առավել լայն կիրառություն ստացած հարկատեսակներից են.

- շրջակա միջավայրի աղտոտման համար հարկերը: Օրինակ, Նիդեռլանդներում, Ֆինլանդիայում և Իտալիայում հարկեր են կիրառվում հանածո վառելիքի այրման արդյունքում արտանետվող ածխաթթու գազի համար, Գերմանիայում, Ֆինլանդիայում, Իտալիայում և մի շարք այլ երկրներում գործում են հարկեր թափոնների (տեղադրման կամ պահման) համար[9]:
- ակցիզային էկոլոգիական հարկեր, որոնք ներառվում են արտադրության և սպառման ընթացքում շրջակա միջավայրին վնաս պատճառող արտադրանքի գնի մեջ: Գերմանիայում, Ֆրանսիայում, Իտալիայում այդպիսի հարկեր են գանձվում քսայուղերի, Նորվեգիայում և Շվեյցարիայում՝ հանքային պարարտանյութերի ու պեստիցիդների համար:

Էկոլոգիական հարկերի քաղաքականության շրջանակում կիրառվում են նաև հարկային արտոնություններ էկոլոգիապես մաքուր արտադրանքի արտադրության և սպառման համար: Այդպիսիք առավել լայն կիրառություն են ստացել ավտոմեքենաների արտադրության դեպքում: Օրինակ, ԱՄՆ-ում յուրաքանչյուր գնված նոր էլեկտրական մեքենայի համար կարող է տրամադրվել 2,500-7,500 ԱՄՆ դոլարին համարժեք հարկային արտոնություն, որի մեծությունն էլ կախված է մեքենայի չափերից և մարտկոցի հզորությունից[10]:

Հատկանշական է նաև, որ էկոլոգիական հարկերի քաղաքականության մեջ կարևորվում է այն գաղափարը, որ էկոլոգիական հարկերի կիրառման միջոցով առաջացած ֆինանսական միջոցները առաջին հերթին պետք է նպատակային օգտագործվեն բնապահպանական միջոցառումների ֆինանսավորման համար[11]:

---

[8] Տե՛ս **Анисимов А. В.,** Прикладная экология и экономика природопользования, учебное пособие, Ростов-на-Дону, “Феникс”, 2007, էջ 171:

[9] Տե՛ս Database on Policy Instruments for the Environment, OECD, 2019, https://pinedatabase.oecd.org/AllInformation_Result.aspx?Key=c1234744-d368-4df9-86dc-ae3f2bc5ec36&Keys=92ae479c-543e-4c37-b87f-45a71c00c309&Ctry=7:

[10] Տե՛ս U.S. Department of Energy, Office of Energy Efficiency and Renewable Energy, 2019 https://www.energy.gov/eere/electricvehicles/electric-vehicles-tax-credits-and-other-incentives:

[11] Տե՛ս **Папенова К.В.,** Экономика природопользования, учебник, М., ТЕИС, ТК Велби, 2010, էջ 487:

Աղտոտման և թափոնների տեղադրման վճարները նախատեսված են տնտեսական գործունեության հետևանքով շրջակա միջավայրին պատճառված վնասների փոխհատուցման համար: Ընդհանուր առմամբ, այս վճարները նախատեսված են վնասակար նյութերը շրջակա միջավայր՝ օդային և ջրային ավազան արտանետելու, արտադրության և սպառման թափոնները շրջակա միջավայրում տեղաբաշխելու համար: Այս տեսակի վճարների հիմքում «Աղտոտողը վճարում է» սկզբունքն է, և մեծավ մասամբ դրանք էկոհամակարգային ծառայությունների դիմաց վճարներ են, քանի որ այս դեպքում աղտոտողը փաստացի վճարում է շրջակա միջավայրի ասիմիլյացիոն ներուժի օգտագործման իրավունքի համար[12]:

Վճարների դրույքաչափերի սահմանման հիմքը հասցված էկոլոգիական վնասի և անհրաժեշտ բնապահպանական միջոցառումների տնտեսական գնահատումն է: Առանձնացվում է վճարների հաշվարկման մեթոդական երկու մոտեցում.

1. շրջակա միջավայրի աղտոտման հետևանքով առաջացած էկոլոգիական վնասի տնտեսական ընդհանուր գնահատման վրա հիմնված մոտեցում,
2. բնապահպանական միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ ծախսերի հաշվարկի մոտեցում[13]:

Առավել նախընտրելի է երկրորդ մոտեցումը, քանի որ էկոլոգիական վնասի տնտեսական ընդհանուր գնահատման մոտեցումն ունի մի շարք մեթոդական դժվարություններ:

Այսպիսով, շրջակա միջավայրի աղտոտման և թափոնների տեղադրման համար վճարները նպաստում են վնասակար նյութերի արտանետումների ծավալների նվազեցմանը, ինչպես նաև հանդես են գալիս որպես ֆինանսական միջոցների կուտակման աղբյուր՝ գործունեության բացասական հետևանքները հատուցելու համար: Այս տեսակի վճարների կիրարկման արդյունավետությունը պայմանավորված է բարձր դրույքաչափերի սահմանմամբ, որոնք պետք է գերազանցեն աղտոտող նյութերի արտանետումների նվազեցմանն ուղղված ծախսերը, հակառակ դեպքում՝ ձեռնարկությունների համար ավելի շահավետ կլինի վճարելով հանդերձ շարունակել աղտոտել շրջակա միջավայրը: Օրինակ, Գերմանիայում վճարներ են գործում վտանգավոր թափոնների համար, որոնց դրույքաչափերը տատանվում են 51.2-153.5 եվրոյի սահմաններում, ինչն էլ կախված է թափոնների վտանգավորության աստիճանից, իսկ Ֆինլանդիայում՝ միջուկային թափոնների համար[14]:

Սուբսիդիաները (լրավճար) շրջակա միջավայրի պահպանության միջոցառումների իրականացման նպատակով տնտեսավարող սուբյեկտների նկատմամբ պետական օժանդակություն են[15]: Դրանց ձևերից են դրամա-

---

[12] Տե՛ս **Анисимов А.В.,** Прикладная экология и экономика природопользования: учебное пособие, Ростов-на-Дону, Феникс, 2007, էջ 169:

[13] Տե՛ս **Макар С.В.,** Экономика природопользования, конспект лекций, 2-е изд., М., Издательство Юрайт, 2011, էջ 159:

[14] Տե՛ս Database on Policy Instruments for the Environment, OECD, 2019, https://pinedatabase.oecd.org/All_Information.aspx?isid=fd6ad9b4-22a9-49a5-a41d-3969c8e1adcb:

[15] Տե՛ս **Шимова О.С., Соколовский Н.К.,** Экономика природопользования, учеб. пособие, 2-е изд., М., “ИНФРА-М”, 2011, էջ 197:

շնորհները, որոնք պետության կողմից կազմակերպությանը տրված անհատույց ֆինանսական օգնություն են՝ շրջակա միջավայրի աղտոտվածության կրճատման, բնական ռեսուրսների առավել արդյունավետ օգտագործման, խոշոր նախագծերի իրականացման համար: Օրինակ, Շվեյցարիայում կոշտ թափոնների վերամշակման կայանների կառուցման դեպքում ընկերություններին սուբսիդիաներ են տրամադրվում դրանց արժեքի մինչև 50%-ի չափով, իսկ Գերմանիայում ընկերությունները էկոլոգիապես անվտանգ տեխնոլոգիաների ներդրման դեպքում կարող են լրավճար ստանալ մինչև 50%-ի չափով[16]:

Տնտեսական մեխանիզմի գործիքներից կարելի է նշել նաև արտադրության էկոլոգիացման համար տրվող ցածր տոկոսադրույքով վարկերը, բնապահպանական նշանակության հիմնադրամների արագացված ամորտիզացիան: Օրինակ, Ֆինլանդիայում ՓՄՁ-ներին աղտոտման ծավալների նկատմամբ հսկողություն իրականացնելու համար տրամադրվում են վարկեր շուկայական միջին տոկոսադրույքից երկու տոկոսով ցածր դրույքաչափով:

Հիմնական միջոցների արագացված ամորտիզացիոն հատկացումները գիտական և տեխնոլոգիական առաջընթացը խթանելու արդյունավետ միջոցներից են: Ընկերությունը, իրականացնելով արագացված ամորտիզացիոն հատկացումներ, նվազեցնում է հարկման ենթակա շահույթի գումարը: Բնապահպանական նպատակներով արագացված ամորտիզացիոն հատկացումների համակարգի օգտագործման փորձը մի շարք երկրներում դրական ազդեցություն է ունեցել շրջակա միջավայրին հասցվող վնասը նվազեցնելու գործում, մասնավորապես՝ տեխնոլոգիաների կատարելագործման համար կապիտալի արագ կուտակման տեսանկյունից: Օրինակ, Գերմանիայում քիմիական նյութերի մաքրման կայանների ամորտիզացիոն դրույքաչափն առաջին տարվա համար կազմում է 60%, հաջորդող չորս տարվա համար՝ 10%, իսկ Ֆինլանդիայում ջրային միջավայրի և մթնոլորտի աղտոտման կրճատման նպատակով կիրառվող տեխնոլոգիաների դեպքում ամորտիզացիոն հատկացումների դրույքաչափը կազմում է տարեկան 25%[17]:

Աղտոտման թույլտվությունների (իրավունքի) առքուվաճառքի համակարգի գաղափարն այն է, որ պետական լիազոր մարմինը, որոշելով շրջակա միջավայրի վրա ազդեցության թույլատրելի սահմանները, կարող է սահմանել որոշակի նյութերի արտանետումների հստակ ծավալ՝ որոշակի տարածքի և ժամանակի համար ու լիցենզիաների տեսքով տրամադրել համապատասխան քանակի արտանետումների թույլտվություն՝ այդ տարածքում գտնվող տնտեսավարող սուբյեկտներին: Եթե տնտեսավարող սուբյեկտի արտանետումների փաստացի ծավալը կազմում է ավելի քիչ, քան նախատեսված է լիցենզիայով, ապա նա արտանետման մնացած ծավալի թույլտվությունը կարող է վաճառել մեկ այլ տնտեսավարող սուբյեկտի, որը արտանետումների իրավունքի ձեռք բերման կարիք ունի: Այդ լիցենզիաները կամ անմիջապես տրամադրվում են կառավարության կողմից, կամ վաճառվում են աճուրդների միջոցով, ընդ որում՝ աճուրդներում վաճառքի դեպքում հնարավոր է առավելագույն ֆինանսական միջոցներ ներգրավել էկոլոգիական ծրագրերի

[16] Տե՛ս Database on Policy Instruments for the Environment, OECD, 2019, https://pinedatabase.oecd.org/All_Information.aspx?isid=fd6ad9b4-22a9-49a5-a41d-3969c8e1adcb:

[17] Տե՛ս նույն տեղը:

իրականացման համար: Ինչ վերաբերում է լիցենզիաների երկրորդային վերաբաշխմանը, ապա այն իրականացվում է էկոլոգիական բորսաների կամ բանկերի միջոցով: Էկոլոգիական բորսաները միջնորդ կազմակերպություններ են, որտեղ տեղի են ունենում աղտոտման թույլտվությունների առք ու վաճառքի գործարքներ: Էկոլոգիական բանկերը հատուկ բանկեր են, որտեղ այն ձեռնարկությունները, որոնք իրենց արտանետումները կրճատում են թույլտվություններով նախատեսվածից ավելի, կարող են ստացված տարբերության չափով ձևակերպել ակրեդետիվ, որը հետագայում կարող են վաճառել կամ անհրաժեշտության դեպքում օգտագործել: Դա հեշտացնում է լիցենզիայի հնարավոր գնորդների համար վաճառողների ընտրությունը: Բանկերը կատարում են նաև հաշվառման գործառույթ՝ ապահովելով ծախսված իրավունքների մարումը և թույլ չտալով դրանց կրկնակի օգտագործումը:

Աղտոտման թույլտվությունների վաճառքի համակարգը լայն կիրառություն է ստացել ԱՄՆ-ում, Նիդեռլանդներում, Դանիայում, Գերմանիայում, իսկ մի շարք այլ երկրներում քայլեր են արվում դրա ձևավորման ուղղությամբ[18]:

Գրավ-վերադարձ համակարգը, կարելի է ասել, շրջակա միջավայրի պահպանության տնտեսական մեխանիզմի ամենահին և արդյունավետ գործիքներից մեկն է: Այս համակարգի էությունն այն է, որ շրջակա միջավայրին վտանգ ներկայացնող ապրանքի համար գանձվում է որոշակի վճար, որը հետագայում այդ արտադրանքի վերամշակման դեպքում ենթակա է վերադարձման: Ի սկզբանե այդպիսի վճարներ գանձվել են ըմպելիքների ապակե շշերի համար, այնուհետև տարածվել են մի շարք ապրանքների վրա, որոնցից են պլաստիկ տարաները, ավտոմեքենաների մարտկոցները, էլեկտրական լամպերը, կենցաղային տեխնիկան և այլն: Չնայած իր պարզությանը, այս սկզբունքի կիրառումը բավականին արդյունավետ է և թույլ է տալիս նվազեցնել թափոնների ծավալները շրջակա միջավայրում՝ դրանց վերամշակման հաշվին տնտեսելով զգալի ֆինանսական միջոցներ: Այս համակարգի կիրառման արդյունքում, օրինակ՝ ԱՄՆ-ում, գարեջրի և զովացուցիչ ըմպելիքների՝ տարաների վերամշակումը կազմում է 50-85%, իսկ Դանիայում պլաստիկ շշերինը՝ գրեթե 99%[19]:

Տուգանքներն էական նշանակություն ունեն բնական ռեսուրսների ռացիոնալ օգտագործման և շրջակա միջավայրի պահպանության հարցում: Դրանք, ըստ էության, տնտեսական պատժամիջոց են բնապահպանական նորմատիվաիրավական պահանջների չպահպանման համար: Տուգանքների մեծությունը հաշվարկվում է կանխարգելման սկզբունքի հիման վրա: Մասնավորապես, դրանց մեծությունն այնպիսին պետք է լինի, որ էական ազդեցություն ունենա էկոլոգիապես անընդունելի գործունեության վրա: Տուգանքների կիրառման լավագույն օրինակներից է 2010 թ. Մեքսիկական ծոցում նավթահորի վթարի հետևանքով նավթի արտահոսքի դեպքը: Ընկերությունը, որին պատկանում էր նավթահորը, տուգանվեց 4.5 մլրդ ԱՄՆ դոլարի չա-

---

[18] Տե՛ս **Тютюкина Е.Б., Седаш Т.Н., Данилов А.И.,** Экономические инструменты обеспечения охраны окружающей среды: управленческий аспект, Управленческие науки. 2015, 5(4), էջ 52-61.

[19] Տե՛ս Database on Policy Instruments for the Environment, OECD, 2019, https://pinedatabase.oecd.org/All_Information.aspx?isid=fd6ad9b4-22a9-49a5-a41d-3969c8e1adcb:

փով, իսկ մինչև 2014 թ. ավելի քան 14 մլրդ ԱՄՆ դոլար ծախսեց՝ հասցված վնասը փոխհատուցելու համար[20]:

Եզրակացություններ: Շրջակա միջավայրի պահպանության տնտեսական մեխանիզմի գործիքակազմի ուսումնասիրությունների արդյունքում առանձնացվել են շրջակա միջավայրի պահպանության տնտեսական մեխանիզմի հետևյալ հիմնական գործիքները.

1. Էկոլոգիական հարկեր կամ «կանաչ» հարկեր, որոնք միջազգային փորձառության ընթացքում ամենահաճախ կիրառվող գործիքներից են: Էկոլոգիական հարկերը միտված են խթանելու բնական ռեսուրսների ռացիոնալ օգտագործումը և շրջակա միջավայրի պահպանությունը:
2. Աղտոտման և թափոնների տեղադրման համար վճարներ, որոնք նպաստում են վնասակար նյութերի արտանետումների ծավալների նվազեցմանը, ինչպես նաև հանդես են գալիս որպես ֆինանսական միջոցների կուտակման աղբյուր՝ գործունեության բացասական հետևանքները հատուցելու համար:
3. Սուբսիդիաներ (լրավճարներ), արտոնյալ վարկավորում և բնապահպանական նշանակության հիմնադրամների արագացված ամորտիզացիոն հատկացումների համակարգ, որոնց կիրառումը տնտեսավարող սուբյեկտների համար բնապահպանական միջոցառումների իրականացումն առավել շահավետ է դարձնում և խթանում է լավագույն հասանելի տեխնոլոգիաների ներդնումն ու կիրառումը, ինչն էլ իր հերթին նվազեցնում է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունը:
4. Աղտոտման թույլտվությունների (իրավունքի) առքուվաճառքի համակարգ, որը ժամանակի ընթացքում ավելի լայն տարածում է ստանում ամբողջ աշխարհում: Այն կիրառվում է արտանետումների համար սահմանված թույլտվությունների բաշխման նպատակով և ուղղված է կլիմայի փոփոխության մեղմմանը, ինչպես նաև մթնոլորտի և ջրային ռեսուրսների աղտոտման կրճատմանը: Համակարգի գլխավոր առանձնահատկությունն այն է, որ արտանետման թույլտվությունները սահմանվում են շրջակա միջավայրի ինքնամաքրման ունակությանը համապատասխան:
5. Գրավ-վերադարձ համակարգ, որի դեպքում վճարներ են սահմանվում շրջակա միջավայրն աղտոտող ապրանքների համար և տնտեսապես շահավետ պայմաններ ստեղծվում այդպիսի ապրանքների երկրորդային օգտագործման, վնասազերծման նպատակով, ինչի արդյունքում էլ կրճատվում են շրջակա միջավայրի համար վտանգավոր թափոնների ծավալները:
6. Տուգանքներ, որոնք բնապահպանական նորմատիվաիրավական պահանջների խախտման դեպքերի համար սահմանված վարչական և տնտեսական պատժամիջոցներ են՝ հաշվարկված կանխարգելման սկզբունքի հիման վրա:

[20] Տե՛ս РИА НОВОСТИ, Разлив нефти в Мексиканском заливе 22 апреля 2010 года, URL: http://ria.ru/spravka/20140422/1004524045.html:

Այսպիսով, ուսումնասիրելով շրջակա միջավայրի պահպանության տնտեսական մեխանիզմի գործիքակազմի հիմնական տեսակներն ու առանձնահատկությունները, ինչպես նաև ԱՄՆ-ի և եվրոպական մի շարք երկրների՝ շրջակա միջավայրի պահպանության տնտեսական մեխանիզմի կիրառման փորձը, պարզ է դառնում, որ շրջակա միջավայրի պահպանության տնտեսական մեխանիզմի գործիքակազմի արդյունավետ ներդրման և նպատակային կիրարկման դեպքում կարելի է հասնել էկոլոգիապես և տնտեսապես համադրելի դրական արդյունքների:

Օգտագործված գրականություն

1. Գևորգյան Ս.Ա., Պետրոսյան Ռ.Ա., Գևորգյան Ա.Պ., Բնապահպանական և բնօգտագործման վճարների որոշման մեթոդաբանության կատարելագործման հիմնախնդիրները ՀՀ-ում, Եր., «Տնտեսագետ», 2014:
2. «ՀՀ Կառավարության նիստի արձանագրությունից քաղվածք բնապահպանության ոլորտի նորարարական ֆինանսատնտեսական մեխանիզմների ստեղծման հայեցակարգին հավանություն տալու մասին», https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=83040:
3. Анисимов А.В., Прикладная экология и экономика природопользования, учебное пособие, Ростов-на-Дону, “Феникс”, 2007.
4. Макар С.В., Экономика природопользования: конспект лекций, 2-е изд., М., “Юрайт”, 2011.
5. Москаленко А.П., Гутенев В.В., Москаленко С.А., Денисов В.В., Экономика природопользования и ресурсосбережения, учебное пособие, под ред. Москаленко А.П., Ростов-на-Дону, “Феникс”, 2014.
6. Папенова К.В., Экономика природопользования: Учебник. М., ТЕИС, ТК Велби, 2010.
7. Тютюкина Е.Б., Седаш Т.Н., Данилов А.И., Экономические инструменты обеспечения охраны окружающей среды: Управленческий Аспект. Управленческие Науки. 2015, 5(4).
8. Шимова О.С., Соколовский Н.К., Экономика природопользования: учеб. пособие. 2-е изд. М., ИНФРА-М, 2011.
9. РИА НОВОСТИ, Разлив нефти в Мексиканском заливе 22 апреля 2010 года, URL: http://ria.ru/spravka/20140422/1004524045.html.
10. Database on Policy Instruments for the Environment, 2019, OECD, https://pinedatabase.oecd.org/AllInformation_Result.aspx?Key=c1234744-d368-4df9-86dc-ae3f2bc5ec36&Keys=92ae479c-543e-4c37-b87f-45a71c00c309&Ctry=7.
11. Database on Policy Instruments for the Environment, 2019, OECD, https://pinedatabase.oecd.org/All_Information.aspx?isid=fd6ad9b4-22a9-49a5-a41d-3969c8e1adcb.
12. Policy Instruments for the Environment Brochure on the Database 2017, http://www.oecd.org/environment/tools-evaluation/PINE_database_brochure.pdf.
13. U.S. Department of Energy, Office of Energy Efficiency and Renewable Energy, 2019, https://www.energy.gov/eere/electricvehicles/electric-vehicles-tax-credits-and-other-incentives.

НАДЕЖДА АФЯН
Ассистент кафедры экономики природопользования АГЭУ, кандидат экономических наук
ГАРРИ ГАСПАРЯН
Магистрант 1-го курса кафедры экономики природопользования, АГЭУ

Инструменты экономического механизма охраны окружающей среды.– В статье исследованы инструменты экономического механизма охраны окружающей среды и рассмотрены особенности применения их основных видов в международной практике. В результате исследования были представлены основные виды инструментов экономического механизма охраны окружающей среды в соответствии с сопоставимыми экологическими и экономическими положениями охраны окружающей среды. Сделан вывод, что при эффективной консолидации и целевом применении инструментов экономического механизма охраны окружающей среды можно достичь сопоставимых экологических и экономических результатов.

Ключевые слова: *экологические налоги, торговля квотами, лицензиями (правами) на загрязнения, схема залогов – возмещений, штрафы за загрязнение окружающей среды*
JEL: Q50, Q58

NADEZHDA AFYAN
Assistant at the Chair of Environmental Economics at ASUE, PhD in Economics

GARRI GASPARYAN
First Year MA Student at the Chair of Environmental Economics at ASUE

Instruments of Economic Mechanism of Environmental Protection.– The paper explores the tools of the economic mechanism of environmental protection and considers the features of the application of the main types in the international practice. As a result of the study, the main types of tools of the economic mechanism of environmental protection were presented in accordance with comparable environmental and economic provisions for environmental protection. It is concluded that with the effective consolidation and targeted use of the tools of the economic mechanism of environmental protection, comparable environmental and economic results can be achieved.

Key words: *environmental taxes, tradable permits, deposit-refund systems, fees and charges, pollution and waste disposal fees.*
JEL: Q50, Q58